

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը՝ ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

377 77-80 576
576

ԿՈՄՅԵՐԻ ՏՐԱԴԱՐԱՆ № 40

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՆԻՔ

Ն. ԼԵՍԵՎԻՑԻ 84:

576
576 e.

ԻՆՉՈՒՍ ԵՆ ԱՅԺՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

13 ՆԿԱՐՈՎ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926



ԿՈՄՅԵՐԻ ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 40.


Ա. ԼԵՍԵՎԻՑԻ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՅԺՄ

ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

13 ՆԿԱՐՈՎ.

ՀԱՏԿԱ
Հ



ՊԵտական հրատարակություն
Յելիսավան - 1926

№ 344

Գրառեալվար 228 ը.

Տիրաժ 4000

Պետհատի առաջին տպարան Վաղարշապատուի

ԶԵ ԿԱՐԵՎԸ ՄՈՌԱՆԱԼ.

1914 թվի հուլիս-օգոստոսը հիշելի պետք ե
լինեն Խորհրդային Միության աշխատավորության
համար։

Այն ժամանակ սկսվեց համաշխարհային
արյունահեղ սպանդը, վորը տասնյակ միլիոն
կյանքեր տարավ. Սարսափելի, իր դաժանու-
թյամբ չտեսնված մի պատերազմ եր դա, վորի
մեջ իրար դեմ դուրս յեկան Ռուսաստանի,
Ֆրանսիայի, Գերմանիայի և մյուս յերկրների
բանվորներն ու գյուղացիները։

Մի բուռն կապիտալիստների վոսկու ծա-
րավի և թագակալ դահիճների անմիտ փառքի հա-
մար միլիոնավոր մարդիկ դուրս յեկան իրար
սպանելու։

Ինչու ժողովուրդը պատերազմեց։

Ինչու չորս տարուց ավել նա իր արյունը
թափեց։

Միայն Խորհրդային Միության մեջ այդ

մասին կարելի յե բարձրածայն խոսել, իսկ այն
ժամանակ, տասը տարի սրանից առաջ, համաշ-
խարհային սպանդի ձեռնարկողներն ամեն կերպ
աշխատում եյին ժողովրդից ծածկել սպանդի
պատճառները:

Բոլոր յերկրներում իշխանությունը գտնը-
վում եր բուրժուազիայի ձեռքին։ Նրանց ձեռ-
քին Եյին գտնվում թերթերը, գրքերը, նրա հետ
ձեռք ձեռքի տված գնում եր նաև յեկեղեցին։
Նրանք տասնյակ տարիների ընթացքում ճար-
պիկացել եյին ժողովրդի աչքին թող փչելու
գործում։ Իսկ այն ժամանակ դժվար չեր այդ
անել։

Ոգտվելով այն հանգամանքից, վոր պատե-
րազմող յերկրները կտրված եյին միմյանցից,
ամեն մի յերկրում պատմում եյին, վոր իրենց
վրա «հարձակվել» են։ Իսկ քանի վոր հար-
ձակվել են – հարցը պարզ ե – «պետք ե պաշտ-
պանել հավատը, թագավորին ու հայրենիքը»։

Բայց իսկապես, դեռ 25 տարի առաջ, գիշա-
տիչ իմպերիալիստներին նեղ եր գալիս աշխարհը։
Քանի դեռ նորանոր յերկրներ եյին գտնվում,
հեշտ եր ձեռք ձգել և նորանոր շուկաներ։ Բայց
19-րդ դարի վերջում այլևս ազատ շուկաներ
չկային։ Նոր, չկողոպտված և ազատ հողամաս
այլևս չեր մնացել, իսկ արդյունաբերությունն

աճում եր ինչպես ձնագունդ։ Մնում եր միայն
բաժանել արդեն հափշտակված հողերը, իսկ
առաջին հափշտակիչը, ինարկե, ախորժակ չուներ
իր ձեռքից բաց թողնելու վորսը։

ՊԱՏԵՐՍ.ՁՄԻ ՊԱՏՃԱՌՈՒԵՐԸ.

Կապիտալիզմի առաջին տարիներում ամենից շատ հափշտակեց Անգլիան։ Գերմանական զարգացող կապիտալիզմը տեսավ, վոր ամենալավ պատառներն արդեն Անգլիայի ձեռքին են գտնվում,
և վոր նա բարեկամությամբ, հաշտ ճանապարհով վոչինչ չի տա։ Դեռևս պատերազմից տասնընինդ տարի առաջ Անգլիան ու Գերմանիան աշխատում եյին «ՉՐՅԱՎԱՏԵԼ ՄԻՄՅԱՆց»։

Գերմանական Վիլհելմ կայսրը ջանում եր «ՉՐՅԱՎԱՏԵԼ» Անգլիային, կազմելով նրա դեմ Գերմանիայից, Ռուսաստանից և Ֆրանսիայից մի միություն։ Իսկ անգլիական եղվարդ VII-րդ թագավորը (այժմյան Գեվորգ V-ի հայրը) ջանում եր իր կողմը գրավել ֆրանսիացիներին և ռուսներին։

1907 թվին այդ բանը հաջողվեց նրան։ Ռուսներն ու ֆրանսիացիներն անգլիացոց դաշնակիցները դարձան, գերմանացիների հետ մնացին միայն Ավստրո-Հունգարիան ու Տաճկաստանը։

Յերկու կողմերն ել ամենայն ուժով կռվի պատրաստվեցին։ Մուսաստանը յապոնական պատերազմում կորցրածի փոխարեն նոր նավատորմիդ սկսեց կառուցել։

Ֆրանսիան մեկուկես անգամ ավելացրեց իր բանակը։

Անգլիան սկսեց կառուցել այնպիսի հսկայական զրահանավեր (գրեգնոռուտներ), վորոնց դիմաց նախկին նավերը փոքրիկ նավակներ եյին թվում։ Գերմանացիք, հասկանալի յե, վոր յեւ չեյին մնում։ Նրանք այդ ժամանակամիջոցում ստեղծեցին այնպիսի մի հրետանի, վորը յերկու որվա ընթացքում կարող եր ավերել ամենաանառիկ բերդերը։ այնպիսի ջրասույզ նավատորմիդ, վորը պիտի խորտակեր անգլիական առևտրական նավերը։ այնպիսի հսկայական ողանավեր, «ցեպպելիններ», վորոնք կարող եյին առանց գիտին իջնելու տասհազարավոր վերստեր թռչել։

Թե ինչ յեղավ 1914 թվի ոգոստոսից հետո—աշխատավորները լավ են հիշում։ Նրանց հայրերը, յեղբայրներն ու զավակներն ընկան Գալիցիայի, Պոլուսիայի և Լեհաստանի դաշտերում։ Գեղջկուհիները մնացին այրի, յերեխաները—վորք, իսկ պատերազմից վերադարձած հաշմանդամները—ինեղանդամ ամբողջ կյանքում։

Հիշեցեք, թե ինչպես ժողովրդի վկին սեղ-

մըվում եր պատերազմի արյունալի և սարսափելի
ողակը, և դժվար ե ասել, թե ել ինչպիսի անս-
սելի սարսափներ՝ պիտի ապրեր ժողովրդական
մասսան, յեթե չկատարվեր հոկտեմբերյան հե-
ղափոխությունը, յեթե պրոլետարական մաս-
սաներին կարող կերպով չղեկավարելին կոմմու-
նիստները—բայլշիկները:

ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ .

Մեր անմոռանալի առաջնորդ Լենինն իր
յերկաթե ձեռներով արյունով խելագարված ժո-
ղովրդին դուրս բերեց իմպերիալիստական, թա-
թալանչիական պատերազմի նզովյալ ողակից:

Լենինի ձայնը հնչեց ամբողջ աշխարհում.—
«Բանվոր ու գյուղացի ընկերներ, դարձրեք ձեր
զենքը վոչ թե ձեր աշխատավոր յեղբայրների,
այլ պատերազմի հրահրողների ու ձեռնարկող-
ների, թագավորակալվածատիրական վոհմակի
ու կապիտալիստ գործարանատերերի դեմ»:

Խավար եր ոռւս ժողովուրդը, բայց բայլշե-
վիկները բացին նրա աշքերը: Բանվորներն ու
գյուղացիները տեսան, վոր ճիշտ ե ընկ. Լենինը,
վոր պետք ե սկսել պատերազմ պատերազմի դեմ:
Աշխարհակալական անմիտ սպանդը պետք ե քա-
ղաքացիական պատերազմի փոխել, պատերազմել
ժողովրդին իշխանություն, հող և աղատություն

ձեռք բերելու համար։ Սարսափելի ջանքերով
հաղթեց ժողովուրդը։ Խորհրդային Մոցիալիստա-
կան Հանրապետությունների Միությունը ձեռք
բերեց խաղաղություն։

Բայց 1914 թվի պատերազմը վերջինը չե-
մարդկությունը կանգնած ե նոր պատերազմնե-
րի սպառնալիքի առաջ։ բուրժուազիան զինվում
ե մինչև ատամները, վոտից ցվլուխ։

Միակ յերկիրը Խորհրդային Միությունն ե,
ուր պատերազմի ու խաղաղության հարցը լու-
ծում են բանվորներն ու գյուղացիները։

Միակ յերկիրը, վոր տապալեց իր բուրժու-
ազիային, մեր յերկիրն ե։ Բայց մենք շրջապատ-
ված ենք աշխատավորության թշնամիներով։ Քա-
նի դեռ մյուս յերկրներում պրոլետարիոտը՝ բան-
վորներն ու գյուղացիներն իր ձեռքը չեն վերցրել
իշխանությունը, մինչև այդ ժամանակ ժամանակ ժողո-
վորդի դլխին ծանրանալու յե պատերազմի
արյունալի սպառնալիքը։

Քանի դեռ մյուս յերկրներում բանվորն ու
գյուղացին ստրուկ են բուրժուազիայի ձեռքին,
բանի դեռ այնտեղ չի հաղթանակել հեղափո-
խությունը, պատերազմի վտանգի դեպքում մենք
կարող ենք միայն մեզ վրա դնել հույսը։

Վորքան ուժեղ և անհաղթ լինենք, այնքան
ավելի մեծ վոգնորությամբ ու վստահությամբ

մյուս յերկրների աշխատավորությունը կկատարե հեղափոխություն։ Թող գյուղը, վորն ամբողջովին լծվել ե խաղաղ աշխատանքի, հիշի, վոր գիշատիչ իմպերիալիստներն ուժեղ թափով պատերազմի յեն պատրաստվում և մի հարվածով կարող են ամեն ինչ շրջել ու նորից մեզ պատերազմի հրդեհը ձգել։

Թող Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ամբողջ Միությունը միաբերան կոչի։ — Կորչի իմպերիալիստական պատերազմը՝ Կեցցե բոլոր յերկրների բանվորների ու գյուղացիների քաղաքացիական պատերազմը ընդդեմ նամաշխարհային կուպիտալի։

ԱՐԴՅՈՒՔ ՊԵՇՏՔ Ե ԲԱՆԱԿԸ.

Մեր Խորհրդային իշխանությունը, բանվուների ու գյուղացիների աշխատավորության իշխանությունը չի ցանկանում պատերազմ և ձրգում ե խաղաղ ապրել բոլոր ժողովուրդների հետ։ Մեզ, աշխատավորներիս պետք չեն նվաճումներ. մենք չենք ցանկանում խլել ուրիշների հողերը. մենք ջերմորեն ձգտում ենք ամբողջ աշխարհի աշխատավորության յեղբայրությանն ու միությանը։

Բայց և այնպես մենք 600.000-անոց բանակ (զորք) ենք պահում, բանվորներին ու գյու-

ղացիներին նրանց կյանքի ամենալավ ժամանակը
տարի ու կեսով կտրում ենք դազգյահից ու գու-
թանից։ Հսկայական գումարներ ենք ծախսում
այդ հոծ մասսային տեղավորելու, կերակրելու և
հազցնելու համար։ Ավելի մեծ գումար ե ծախս-
վում, վորպեսզի մեր բանակն ունենա այն
ամենը, ինչ վոր անհրաժեշտ ե պատերազմի հա-
մար, այսինքն՝ հրացաններ, գնդացիրներ, թւն-
դանոթներ, ողանավեր, ձիեր. մեքենաներ և
այլն։ Այդ բոլորի փողը տալիս ենք մենք, աշխա-
տավորներս։ Մեզանից շատերի գլխում կարող ե
միտք հղանալ՝ «ինչի՞ համար ե այդ բոլորը»։

Չե վոր ավելի հեշտ ու լավ կապրեյին բո-
լորը, յեթե ցրեյին բանակը, և ամեն վոք նվիր-
վեր խաղաղ ոգտակար աշխատանքի։

Յեվ իսկապես, ցըելով բանակը մենք ավե-
լի հեշտ ու շուտ կվերացնեյինք ավերածու-
թյունը և լավ կապրեյինք, բայց, դժբախտաբար,
վոչ մի կերպ հնարավոր չե ցրել բանակը։ Մի-
այն Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-
տությունների Միության (ԽՍՀՄ) մեջ ե հա-
տատված աշխատավորության իշխանությունը, իսկ
մյուս յերկրներում կառավարում են կալվուծա-
տերերը, հարուստ վաճառականներն ու գործա-
ռանատերերը։ Նրանք վախենում են, վոր իրենց
բանվորներն ու գյուղացիները մեզնից որինակ

կվերցնեն և, իորկելով նրանց կհաստատեն իրենց
իշխանությունը։ Ուրախ կլինելին նրանք հարձակ-
վել մեղ վրա, ու մի անգամ չե, վոր փորձել են
այդ անել, բայց միշտ զլիսի յեն ընկել, վոր մեր
կարմիր բանակի հետ հեշտ չե գործ ունենալ։

Բոլոր բուրժուական պետությունները մեծ
բանակներ են պահում և հսկայական գումար-
ներ ծախսում սպառազինման վրա, զինվորական
ծառայության են կանչում ազգաբնակության ավե-
լի մեծ մասը, քան թե մեղ մոտ։

Ֆրանսիայում կա 900 - հազարանոց բանակ,
իսկ այնտեղ ապրում ե 41 միլիոնից սիքիչ
ավելի ժողովուրդ։ Յեթե մենք զինվորական ծա-
ռայության վերցնենք բնակչության այս մասը,
վոր վերցնում ե ֆրանսիան, այն ժամանակ մեր
բանակը կլիներ վոչ թե 600 - հազարանոց,
այլ մոտ 2 միլիոնանոց։

Լեհաստանում ապրում ե 25 միլիոն մարդ,
իսկ բանակում կա 350 հազար մարդ։ Այնտեղ
զինակոչի յե յենթարկվում բնակչության միքիչ
փոքր մասը, քան թե ֆրանսիայում, բայց և այն-
պես յերեք անգամ ավել ե, քան թե մեղ մոտ։

Բնակչության նույն մասը, ինչպես լեհաս-
տանում, զինակոչի յե յենթարկում նումինիան
(ժողովուրդը 16 միլիոն, բանակը՝ 250 հազար)

և Զեխու. Ալովակիան (Ժողովուրդը 13 միլիոնից քիչ
շատ, բանակը՝ 160 հազար):

Փոքը յերկրների համար ավելի ծանր է:
Որինակ Ֆինլանդիայում ապրում են ընդամենը
 $3\frac{1}{2}$ միլիոն մարդ, իսկ բանակում կա 120 հա-
զար։ Յեթե մենք Ֆինլանդիայի նման զինվո-
րական ծառայության կանչելինք ազգաբնակու-
թյան նույն մասը՝ մեր կարմիր բանակում կու-
նենայինք օ միլիոնից ավելի մարդ։

Այդպիսի հոծ մասսայի մենակ պահելը (այ-
սինքն տեղավորել, հազցնել, կերակրել) նըանց
ուժերից վեր ե, բայց, այնուամենայնիվ, նըանք
հսկայական գումարներ են ծախսում իրենց բա-
նակն ավելի լավ զինելու և այնպիսի զենք եր
գործադրելու, վորպեսզի ավելի շատ ժողովուրդ
կոտորեն։

ՀՐԱՑԱՆՆԵՐՆ ՈՒ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԸ.


Մինչև համաշխարհային պատերազմը ոռու-
սական հին բանակի, ինչպես նաև մյուս յերկը-
ների բանակների հետևակը զինված եր միայն
հինգ փամփուանոց պահեստատուփ ունեցող հրա-
ցանով և քիչ քանակությամբ ծանր գնդացիր-
ներով։ Գնդացիրները տրվում եյին գնդին և կազ-
մում եյին հատուկ զորախմբեր, իսկ հիմա դա
բավական չե։ Վոչ միայն ավելացրել են ծանր

գնդացիրների թիվը, այլ և հետեակին տվել են հրացան - գնդացիրներ և թեթև գնդացիրներ։ Ներկայումս ամեն մի տասներեք մարդն ունի մի հրացան-գնդացիր, նա կշռում է մոտ 8 կիլոգրամ (20 ֆունտ)։ Վորտեղ կա հետեակ թեկուղ փոքրիկ խումբ, այնտեղ անպայման պիտի լինի հրացան-գնդացիր։ Դրանով մի ըռպեյում կարելի յե կրակել 350 գնդակ, և նա իր կրակելու ուժով փոխարինում է պահեստատուփով հրացանից կրակող 20-30 հրաձիգի։

Բայց հրացան-գնդացիրները նշան են խփում միայն փոքր տարածության վրա (մինչև 800 քայլ)։ Դրա համար վաշտերին տվին թեթև գնդացիրներ, Դրանք միքիչ ավելի ծանր են, կշռում են մոտ 15 կիլոգրամ (փթից միքիչ պակաս), բայց դրա փոխարեն մի ըռպեյում արձակում են 400 գնդակ և նշան են խփում 1000-1200 քայլի (մետր) վրա։

Պետք են նաև ավելի մեծ տարածության վրա նշան խփող գնդացիրներ. այդ նպատակով պահեցին ծանր գնդացիրներ։ Շատ տեսակի ծանր գնդացիրներ կան. նրանք ավելի ծանրաշարժ են, քան թեթև գնդացիրները, քանի վոր ավելի շատ են կշռում ($2\frac{1}{2}-3\frac{1}{2}$ փութ, 40-45 կիլոգրամ)։ Նրանց կրակը խորտակիչ է մինչև 1600 մետրի (քայլի) և նույնիսկ ավելի մեծ տարածության

Վրա, Եսկ կը բավականին նշանառու յեւ
Նրանք հրացան. գնդացիրներից արագածիդ են.
Նրանցով մի ըռպեյում կարելի յեւ 500 գնդակ
դցել: Գնդացիրները սարսափելի զենքեր են,
Նրանք հնձում են մարդկանց այնպես, ինչպես
հնձվորը հնձում ե խոտը:



Նկ. 1. Ամերիկյան նոր գնդացիր.

Բայց այս գնդացիրները ևս լավ դուրս չեկան:
Այժմ բոլոր յերկրներում գլուխ են ջարդում,
վորպեսզի մի այնպիսի գնդացիր հնարեն, վոր մի
ըռպեյում ավելի շատ գնդակ արձակի, ավելի հեռու
խփի և միաժամանակ ավելի թեթև լինի:
Ամերիկացիներն արդեն ունեն այդպիսի

գնդացիր։ Նրանով մի ըռպեյում կարելի յե
800 գնդակ արձակել։ Նա գետնի վրա կարող ե
կրակել զորքի դեմ 8 կիլոմետրի վրա ($7\frac{1}{2}$ վերստ),
վերև, դեպի ողանավերը $3\frac{1}{2}$ կիլոմետրի վրա
(գրեթե $3\frac{1}{2}$ վերստ)։ Շատ դժվար ե խփել ողա-
նավին, դրա համար ել հնարեցին այնպիսի գըն-
դակ, վորը թռչելիս իր յետեկից թողնում ե լու-
սավոր հետք։ Ամերիկյան նոր գնդացիրի գնդա-
կի հետքը ցերեկով յերեսում ե մեկուկես, իսկ
գիշերը յերկու վերստի վրա։

Տեսքով նա չի տարբերվում մյուս գնդա-
ցիրներից, միայն թե նրա փողն ավելի յերկար ե։

Այժմ բոլորը փորձում են հրացան-գնդա-
ցիրը, վորը միջանի անգամ արագ ե կրակում
պահեստ ունեցող հրացանից։ Միայն չեն կա-
րողանում վճռել, ամբողջ հետեակին հրացանի
փոխարեն նրանով զինել, թե չզինել։ Վախենում
են, վոր այդ հրացաններով այնքան շատ կկրա-
կեն, վոր նրանց համար հնարավոր չի լինի գըն-
դակ պատրաստել։

ԶԵՐՎԵՐ ՅԵՎ ՀՐԱՑԱՆԻ ՌԱԽՄԵՐ.

Հրացանի և գնդացիրի գնդակից հեշտ ե ծած-
կըվել փոսում և նույնիսկ վոչ խոր առվում,
քարաշեն տներում ու խրամատներում, չխոսե-
լով արդեն միջանի շարք գերաններով և վերելից

յերկու. յերեք արշին հողով ծածկված փոսերի
մասին:

Այդ փոսերը շինում են պատերազմի ժամա-
նակ հրետանու գնդակից ազատվելու համար.
Նրանք կոչվում են պատսպարաններ կամ բլին
դաժներ:

Այդպիսի դեպքերի համար հետևակին զինե-
ցին ձեռքի ռումբերով։ Տարբեր տեսակի յեն
լինում դրանք. Նրանց մեծ մասը նման են զին-
վորական ջրամանին, բայց կողքերից սեղմված
չեն։ Պատերը շինված են հաստ, վորոնց մեջ
ածում են վառող։

Յեթե պատրույզը դրվի ռումբի մեջ և
ձգվի, ապա նա դիպչելով գետնին, պայթում են
բաժանվելով բազմաթիվ մանր կտորների։ Այդ
կտորներն այնպիսի ուժով են թռչում, վոր մարդ-
կանց սպանում ու վիրավորում են։

Պարզ ե, յեթե ռումբը ձգվի մարդկանց
կամ ժողովրդով լցված ապաստարանի մեջ, շա-
տերը կսպանվեն կամ կվիրավորվեն։

Ռումբը միայն վառողով չեն լցնում. յեր-
բեմն ավելացնում են թունավոր հատուկ խառ-
նուրդներ. կտորները կարող են թռչել, իսկ
թույնը կարող ե թունավորել մոտիկ գտնվող-
ներին։ Այդպիսի խառնուրդները կոչվում են
«թունավոր նյութեր», իսկ հաճախ դադեր. թե

ինչ են թունավոր նյութերը, դրա մասին կը-
խոսենք հետո։ Յելքեմն ավելացնում են այն-
պիսի խառնուրդ, վոր այրվելով գոյացնում ե-
ծիսի խիտ ամպ։ Այդպիսի ծիսի մեջ ընկնող
մարդիկ չեն տեսնում, թե ինչ ե կատարվում
շրջապատում, այսինքն չեն կարող իմանալ՝ վոր-
տեղից և ինչքան մարդ ե հարձակվում իրենց վրա։


Թումբը ձեռքով հեռու չի կարելի ձգել.
Դրա համար ել հնարեցին և հրացանի խողովա-
կին ամրացրին մուշտակ և ոռոմըն այնպես
հարմարեցրին, վոր մուշտակ ունեցող հրացանով
կարելի լինի կրակել։ Հրացանի ոռոմը ձեռքի
ոռոմքից յերկու անգամ հեռու յե թոշում։

Արդեն ասացինք, վոր յուրաշանչյուր տաս-
ներեք հետեակայինի մոտ
(մարտական խումբ) կամի
հրացան-գնդացիր, բացի
այդ՝ նրանց տվին մուշտա-
կով մի հրացան՝ ոռոմը
կրակելու համար. մար-
տական խմբի մարտիկնե-
րի կեսը կրում ե ձեռքի և հրացանի ոռոմեր։

Նշանակում ե՝ մարտական խումբը բաժան-
վում ե յերկու ողակի. մեկը գնդացիրային՝
հրացան-գնդացիրով, մյուսը ոռոմբային՝ ձեռքի
և հրացանի ոռոմբերով։




Նկ. 2. Անգլ. ձեռքի
ոռոմը ձգելու պատրաստ։



Այդպիսի ձեռքի ոռմբ, վորն այստեղ նկարված է, կարելի յե ավելի հաճախ տեսնել:

ՀԵՅՅԵՆԵՐ.

Ձեռքի մեկ ոռմբով շատ մարդկանց կարելի յե սպանել, և սկզբում շատ եյին վախենում դրանցից: Բայց շուտով ձեռքի ոռմբերին ընտելացան, և նրանք այլևս այնպես չեն վախեցնում, ինչպես առաջ: Հնարեցին հրացիրներ (օգնեմետ):



Այրվելը ծանր մահ ե. նույնիսկ յերբ քեզ մոտ ե գտընվում հրացիրի այրվող հոսանքը, դժվար ե դիմանալ տաքության:

Հրացիրն այսպես ե շինված, — մետաղյա անոթը լցնում են դյուրավառ և այրվող հատուկ խառնուրդով: Նկ. 3. Անգլ. հրացիր. Անոթին ամրացնում են յերկար ճկուն աղիք: Աղիքին հազցնում են ծորակով ծայրապանակ

(наконечник). Բավական ե դարձնել ծորակը, և նրանից դուրս կժայթքի հեղուկի այրվող հոսանքը : Հեղուկն այնպիսի ուժով ե ժայթքում, վոր թռչում ե 21 մետր (մոտ 30 քայլ) :

Հրացիրի վրա կան փոկեր, վորոնք ձգում են մաշքեն, իսկ աղիքը բռնում են ձեռքին : Հրացիրները հաճախ ոգտագործում են թե հարձակման և թե պաշտպանման ժամանակ : Հարձակման ժամանակ հրածիգները սովորաբար գնում են անմիջապես ոմբածիգների յետելից :

Առաջին անգամ հրացիրները կովի մեջ ոգտագործեցին գերմանացիները : Անգլիացիները հենց վոր տեսան, վոր իրենց վրա գալիս են կրակ շաղ տվող մարդիկ, շշմեցին ու փախան :

Բոլոր բանակներում ել այժմ հրացիրներ կան :

Բացի մեջքի վրա հազցվող հրացիրներից կան նաև գետնի վրա հաստատվող հրացիրներ : Այդպիսի հրացիրներն այրվող հեղուկի հոսանքն ավելի հեռու յեն գցում և ավելի յերկարաժե աշխատում :

ՀԵՏԵՎԱԿԻ ԹՆԴԱԿՈԹՆԵՐ ՅԵՎ ՄՈՒՏԻՐՆԵՐ.

Բոլորն ունեն գնդացիրներ, հրացիրներ և ձեռքի ոռւմբեր : Նույնիսկ յեթե կովում անվաս մնան փոքր թվով գնդացիրներ, ապա նրանք

կարող են մեծ վասներ առաջացնել։ Մտածեցին այնպիսի զենքեր գտնել, վորով հարմար լիներ կովել գնդացիրների դեմ, և հնարեցին փոքրիկ թնդանոթներ։ Միքանի բանակներում այդ թնդանոթները տրված են գնդերին, մյուսներում՝ գումարտակներին։ Թնդանոթն ստիպված եյին փոքր շինել նրա համար, վորպեսզի հարմար լինի տանել ամենաառաջավոր մասերը և շատ նկատելի չլինի։ Բայց նույնիսկ այդպիսի փոքրիկ թնդանոթ չի կարելի անիվերով ամեն տեղ տանել, դրա համար այնպես հարմարեցրին, վոր հնարավոր լինի բաժանել մասերի և ձեռքով հեշտ տեղափոխել։

Զանազան բանակներում տարբեր անուն են տալիս այդպիս թնդանոթներին, բայց ամենից ավելի դրանք կոչվում են «հետեակի թընդանոթներ», իսկ մեզ մոտ՝ գնդի թնդանոթներ։

Դրանցով կարելի յե շատ շուտ-շուտ կրակել (մի րոպեյում 20.30 անգամ)։ Թշնամու գնդացիրը նկատելիս նրա վրա ուղղում են այդպիսի թնդանոթների կրակը, աշխատում են ուղղակի խփել գնդացիրին և փչացնել։ Թնդանոթները միշտ չափում և անվանում են անցքի լայնությամբ, վորից դուրս ե թուչում գնդակը. այդ չափը կոչվում ե կալիբր։

Այդպիսի թնդանոթները հեռու չեն կրակում,

բայց, դրա վոխարեն, կը ակում են հաճախ և հաջող: Գնդակը քիչ ե կշռում (մոտ $1\frac{1}{2}$ ֆունտ), հարվածի ժամանակ պայթում ե և վնասում իր կտորտանքներով:

Ներկայումս Ամերիկայում հնարել են ողանավերի վրա կը ակող 37 միլիմետրանոց փոքրիկ թնդանոթ: Դրանով մի ըռակեյում կարելի յե կը ակել 100-120 անգամ, իսկ գնդակը նույնիսկ չորս վերստ դեպի վեր ե թռչում (չորս կիլոմետրից միքիչ ավելի):

Կովում, թշնամու կը ակի տակ, մարտիկներն աշխատում են թագնվել կը ակից և թաղվում են գետնում: Յեթե կոփվը ձգձգվում ե միևնույն տեղում, ապա առաջին իսկ հնարավորության դեպքում վերեկից ծածկոց են շինում: Շուապում են գնդացիրների շուրջը փոքրիկ ամրություններ շինել: այդ ամրությունները կոչվում են «դիմադրական բներ»:

Յեթե հաջողվեց «դիմադրական բներ» շինել և ծածկել վերեկից, ապա դրա դեմ 37 միլիմետրանոց թնդանոթն անզոր ե: Դա քանդելու համար պետք ե գնդակով վերեկից խփել, իսկ 37 միլիմետրանոց թնդանոթն ուղիղ ե հարվածում: Գնդակը պետք ե ավելի ծանր լինի, և նրա մեջ շատ վառող պետք ե ածել, այլապես նա չի քանդի ծածկոցները:

Առհասարակ ուղիղ խփող զենքերը կոչվում
են թնդանոթներ, իսկ վերեից խփողները՝ մոր-
տիրներ:

Հառւրիցը կարող է խփել թե վերևից և
թե ուղիղ: «Դիմադրական բները» վոչնչացնե-
լու համար հնարել են հետեակի փոքրիկ մորտիր-
ներ և հառւրիցներ. Նրանք կրակում են նույն
տարածության վրա, վորքան հետեակի թնդա-
նոթները, բայց նրանց գնդակը միքանի անգամ
ծանր է և դրա համար նա ավելի ուժեղ է շըր-
ջում հողն ու բանդում ծածկոցները:

Հետեակի թնդանոթներին ոգնելու համար
շինում են ութացիրներ և ականացիրներ: Նրանց
գնդակն ավելի ծանր է (առանձնապես ականա-
ցիրներինը):

Այդ զենքերն ականացիր կոչվեցին ական-
ներ կրակելու համար: Ականացիրները լինում են
թեթև, միջակ ու ծանր:

Միքանի ծանր ականացիրների ականը
կշռում է միքանի տասնյակ փութ:

Ականը դանդաղ է թռչում և թռչելիս յե-
րկում է: Ականի պատերը թնդանոթի գնդակի
պատերից ավելի բարակ են, նշանակում են՝ նրա
մեջ վառողի համար ավելի շատ տեղ կա: Ական-
ները գետնի վրա բաց են անում մեծ փոսեր
և հողը ցըռում հեռուները: Ականը տըաքում է

սարսափելի խլացնող գոռոցով և տակնու վրա յե
անում նույնիսկ ամենաուժեղ պատսպարանը:

Բայց ականացիրները կրակում են փոքր
տարածության վրա (մոտ 1000 քայլ), մինչդեռ
անհրաժեշտ ե տակնուվրա անել ավելի մեծ
հեռավորության վրա գտնվող պատսպարանները և
քանդել խրամատները, վորի համար պետք ե
ունենալ թնդանոթներ և հառըիցներ, վորոնց
մասին կխոսենք հետո:

ՏԵՇԵՐ.

Թշնամին նույնպես ունի գնդացիրներ, հետե-
վակի թնդանոթներ, ոմբացիրներ և ականացիր-
ներ: Նա խորը թաղվեց զետնում. իրեն շրջա-
պատեց միքանի շարք ծակող մետաղալարերով,
այնպես խճճեց, վոր նրա միջով վոչ հնարավոր
և անդնել և վոչ ել սողալ:

Հետեակը պետք ե հարձակվի նրա վրա, առանց
հարձակման վոչ մի կերպ չի կարելի հաղթել:
Մտածեցին այնպիսի մեքենա զանել, վոր չվնաս-
վեր վոչ հրացանի և վոչ ել գնդացիրների գնդակ-
ներից, կարողանար ազատորեն անցնել ծակող
մետաղալարերից, և նրան չկարողանային կան-
գնեցնել խրամատները:

Իսկապես հնարեցին այդպիսի հրաշք. Նա
կոչվում է «տանկ»: Նա ամբողջովին կոփված ե

պողպատյա զրահով, թողնված են միայն վոք-
րիկ լուսամուտներ կրակելու և տեսնելու համար:

Գրեթե միշտ անհրաժեշտ ե լինում կտրա-
տել ճանապարհից հեռու ընկած մետաղալարը,
նշանակում ե, այդ մեքենան պետք ե անցնի ցան-
կացած տեղերից առանց ճանապարհի: Անիվսերի
վրա մեքենան ամեն տեղ չի կարող անցնել, պետք
ե այնպես շինել այն, վորպեսզի կարողանա ան-
ցնել առանց անիվսերի:

Տանկի մեջ դրված ե ավտոմոբիլի նման
մուտոր, իսկ անիվսերը փոքր են: Անիվսերին ա-
մեն կողմից հազցըրած ե պողպատյա թիթեղից
շինված ժապավեն: Մոտորը շարժման մեջ ե
դնում անիվսերը, անիվսերը կապակցվում են ան-
վերջ ժապավենի ցցվածքների հետ, և ժապա-
վենը շարժվում է: Ժապավենի վրա դրսից գետ-
նին կպչող ցցվածքներ կան, և տանկը սողում է:
Ժապավենը կոչվում ե թրթուր:

Ինքը տանկը շատ ծանր ե, դրա համար վոչ
միայն ազատ կերպով կտրում ու անցնում ե
մետաղալարերի միջով, այլև փշում ե քարե
պատերը և նույնիսկ տապալում բավականին մեծ
ծառեր:

Տանկը կարող ե սողալ առանց ճանապար-
հի: շատ լավ բարձրանում և իջնում ե պիրկ
թեքվածքները, անցնում ե փոքր ջրերից, նույն-

իսկ ճահճուտ տեղերից, ուր մարդը չի դիմանում, տանկը կարողանում է սողալ և չթաղվել:

Սկզբում տանկերը շատ դանդաղ եյին շարժվում (մի ժամում մոտ 6 վերստ). այժմ ամեն ջանք գործ են դնում, վորպեսզի տանկը մի ժամում կարողանա անցնել 45 վերստ:

Տանկերը լինում են ծանր, միջակ և թեթև. զինված են թնդանոթներով կամ թնդանոթներով ու գնդացիրներով և կամ միայն գնդացիրներով: Տանկերը նշանառու յեն փոքր տարածության վրա (միշև 1000 քայլ), Նրանց վրա գտնվող թնդանոթները փոքր են և կրակում են նույն տարածության վրա:

Տանկերը հարձակվում են մասսաներով և թշնամու վրա յեն գնում միքանի շարքերով: Նրանք իրարից 100—150 մետր (140—200 քայլ) հեռավորություն են պահպանում: Տանկերի յետեի շարքերը ծոծրակով չեն գնում, այլ մեջլնդմեջ:

Յեթե տանկի վրա հարձակվում են ու շրջապատում հետեակը և մեքենան փչացնելու համար աշխատում են նրա տակ ձեռքի ոռւմբ ձգել, մյուս տանկերը կրակում են, չվախենալով իրենց տանկին կպչելուց, քանի վոր գնդակները նրանց չեն ծակի:

Կտրելով ծակող մետաղալարերը և յելնելով թշնամու խրամատների վրա, տանկը կրակում ե

խրամատների՝ յերկարությամբ։ Ընդհանուրապես
տանկերն աշխատում են անցնել կողը, վորպիս-
զի այնտեղից կը ակեն թշնամու դասավորվածքի
յերկարությամբ։

Տանկերն առաջին անգամ անգլիացիները
հնարեցին։ Առաջ կարծում եյին՝ վորքան մեծ
լինի տանկը, այնքան շատ կլինեն նրա հրանոթ-
ները, գնդացիրները և մարդիկ, և նա այնքան
սարսափելի կլինի թշնամու համար։ Փորձը ցույց
տվեց, վոր այդ այդպես չե, մեծ տանկին ավե-
լի հեշտ ե խփել հրանոթով, դրա համար այժմ
բացառապես թեթև ու միջակ տանկեր են շի-
նում։

Առաջ տանկերը մի ժամում կտրում եյին
6 վերստ։ Կարծում եյին՝ հետեակի հետ աշխա-
տող տանկը չպետք ենրանից արագ գնա, բայց
այդպես դանդաղ սողացող տանկին հեշտ ե
խփել, դրա համար ել աշխատում են ավելացնել
նրա արագությունը։ Բացի դրանից, տանկերի
այրվող նյութերի (վառելիք մոտորի համար—
բենզին) պաշարը բավականացնում ե փոքր տա-
րածության վրա, իսկ այժմ ցանկանում են, վոր
տանկն իր հետ ունենա 600.750 վերստի համար
այրվող նյութ։

Այժմ բոլոր բանակներն ունեն տանկեր։
Ո՞վ և ի՞նչպես կարող ե կռվել այդպիսի հրեշնե-

ըի դեմ։ Ահա թե ի՞նչու բոլորն ել ցանկանում
են հետեակի 37 միլիմետրանոց թնդանոթն
ավելի ուժեղացնել։ Ասհրաժեշտ ե, վորպեսզի նրա
գնդակը հեշտությամբ ծակի տանկի զրահը։

Համաշխարհային պատերազմի ժամանակ
հնարեցին ծանր հրացաններ ու գնդացիրներ,
վորոնց գնդակները ծակում եյին տանկի զրահը։
Նույնիսկ 37 միլիմետրանոցից ավելի մեծ կա-
լիբրով թնդանոթի ամբողջ հրանոթագնդակը
պետք է դիպչի տանկին, վորպեսզի կանգնեցնի
այն և կռվի համար անպետք դարձնի։ Իհարկե,
վորքան ավելի փոքր է տանկը և վորքան արագ
է սողում, այնքան ավելի դժվար է կպցնել
նրան։ Բայց և այնպես տանկի ամենասոսկալի
թշնամին թնդանոթն եւ։

ՀԵՏՏՈՒՆԻ (ԹՎԴԱԿԱՊԹՆԵՐ ՅԵՎ ՀԱՌԵԲԵՑՆԵՐ)։

Ամենից առաջ կռվի մեջ ձեռնուր յե, վոր-
քան կարելի յե, թշնամուցն եռու մարտական կարգ
կազմել և ստիպել նրան, վորքան կարելի յե, յեր-
կար ժամանակ մնալ կրակի տակ։

Յեւկրորդ, մի կետի վրա գնդացիրային ու-
ժեղ կրակ կենտրոնացնելու համար պետք է նրանք
դասավորել իրար մոտ։ Զի կարելի վաղորոք իմա-
նալ, թե դեպի վոր կռղմ ալիտի ուղղել կրակը
և վաղորոք այնտեղ գնդացիրներ դնել։

Յերրորդ, հաճախ անհրաժեշտ ե թշնամուն
հարվածել այնտեղ, ուր այդ չեն կտրող անել զըն-
դացիրները կամ կրակել այնտեղ, վորտեղ չեն
հասնում նրա զնդակները, անհանգստացնել և
կորուստ պատճառել նույնիսկ կովի վայրից տաս-
նյակ վերստ հեռու:

Չորրորդ, պետք ե խորտակել թշնամու ամ-
րոցները, իսկ հաճախ նրանք շատ ամուր են լի-
նում:

Այդ բոլորի համար հարկավոր ե շատ հեռու
կրակել և այնպիսի հրանոթակներ ունենալ,
վորոնք հողում մեծ փոսեր առաջացնեն և վոչըն-
չացնեն պատսպարանները:

Մեծ տարածությունից կրակելը հնարա-
վորություն ե տալիս կրակն ուղղել անհրաժեշտ
ուղղությամբ և մեծ քանակությամբ կրակել
երարից հեռու դասավորված հրանոթներից:


Այդ ամենը կարող ե անել միայն հրետա-
նին, այսինքն թնդանոթներն ու հառերիցները:
Առանց հրետանու ոգնության հետևակը վոչինչ
չի կարող անել: Բոլոր բանակներում տարբեր
մեծությամբ ու նշանակությամբ թնդանոթներ
ու հառերիցներ կան:

Քանի վորլավագույն հրանոթները ներկայումս
Ամերիկայում են, իսկ յերկրի վրա գտնվող բո-
լոր հրանոթների մասին գրելու համար անհրա-

ԺԵՂՈ Ե ՄԻՔԱՆԻ ՀԱՍՏ ԳՐՔԵՐ ԳՐԵԼ, ԴՐԱ ՀԱՄԱՐ
ԴԼԻՍՎՈՐԱԾԵՍ ԿԽՈՍԵՆՔ ԱՄԵՐԻԿԱՆ ՀՐԱՆՈԹՆԵՐԻ
ՄԱՍԻՆ:

Ամերիկայում փորձեր են անում դիվիզիայի
հրետանին ինքնաշարժ, թրթուրային թնդանոթա-
կալների (լաֆետ) միջոցով շարժել:

Չնայած հրանոթը ծանր է, բայց նա շարժ-
վում է մի ժամում 50 վերստ (60 կիլոմետր)
արագությամբ:



Նկ. 4. Ամերիկ. 75 մմ. թեթև թնդանոթ.

Նրա կալիբրը 75 միլիմետր է (3 դյույմից քիչ
պակաս): Նա կրակում է $13\frac{1}{2}$ կիլոմետր ($12\frac{1}{2}$
վերստ) հեռավորության վրա: Գնդակը կշռում
է $13\frac{1}{2}$ ֆունտ: Թնդանոթը պտտվում է թնդա-

Նոթակալի վրա ամեն մի կողմ և կարող ե կրա-
կել համարյա ուղիղ դեպի վեր—դրա համար ել
պիտանի յե կրակելու թե զորքի և թե ողանա-
վերի վրա։ Նրանով մի ըոպեյում կրակում են
20 անգամ։ Կրակելիս չի պահանջվում նրան առ-
ջել մասից հանել, և դրա համար նա միշտ պատ-
րաստ ե կռվի։

Այդպիսի թնդանոթն որական անցնում ե
100 վերստ և միշտ հասնում ե այնտեղ, ուր նրա
կարիքն զգացվում ե։ Տանկի նման նա յել առանց
ճանապարհի յե գնում և զրեթե ամեն տեղ ան-
ցնում ե։ № 4 նկարը ցույց ե տալիս, թե ինչպես
ե նա դուրս գալիս փոսից։

Այդ ինքնաշարժ թնդանոթակալի վրա կա-
րելի յե տեղավորել նաև դիվիզիայի հառւբիցը։


Հառւբիցի կալիբրը 105 միլիմետրից ավելի
յե (4 դյույմից քիչ ավել), զնդակը կշռում ե 35
ֆունտ։ Այդպիսի հրանոթագնդակով կարելի յե
քանդել խրամատները և թույլ պատսպարանները։

Պատերազմը կարող ե յերկարել, պատսպա-
րանները կարող են ավելի ամրանալ, խրամատ-
ներն ավելի խորանալ։ Անհրաժեշտ ե այնպիսի
հրետանի, վորը քանդի նրանց։

Պետք ե կրակել թշնամու հրետանու վրա,
հարկադրել նրան, վոր լոի, կամ, ծայրահեղ դեպ-
ըռմ, ստիպել, վոր թույլ կրակի։ Պետք ե գնդա-

կտկոծել թշնամու թիկունքը, վորպեսզի նա դըժ-
վարանա ամրանալ և հրանոթագնդակներ ու մթերք-
ներ հասցնել:

Դրան ծառայում ե կորպուսային հրետանին:
Կորպուսային հրետանին ավելի ծանը հրա-
նոթագնդակներով մեծ հեռավորության վրա յե
խփում: Կորպուսային հրետանին համաշխարհա-
յին պատերազմի ժամանակ արդեն փոխադրում
ելին մեքենաների վրա: Ամերիկացիները նրա հա-
մար փորձում են՝ ինքնաշարժ թրթուրային թըն-



Նկար 5.


դանոթակալները: Կորպուսային հրետանին նույն-
պես ունի թնդանոթներ ու հառւբիցներ:

Տես 5-րդ նկարը, ուր նկարված ե թնդա-
նոթ ինքնաշարժ թնդանոթակալի վրա:

Նրա կալիբրը 119 միլիմետր ե ($4\frac{1}{2}$ դյույ-
մից ավելի), կարող ե կրակել $16\frac{1}{2}$ կիլոմետր
(15 վերստ), հրանոթագնդակը կշռում ե մի փթից
ավելի (45 ֆունտ): Ավելի դանդաղ ե սողում
դիվիզիայի հրետանուց, բայց, այնուամենայնիվ,

մի ժամում կտրում ե մոտ 20 կիլոմետր (17-18 վերստ)։

Ամերիկյան բանակում կան թնդանոթներ, վորոնք նույնիսկ մեքենաներով (ավտոմոբիլ և տրակտոր) չեն կարելի փոխադրել, չնայած այդ մեքենաները փոխադրում են 1000 փութ կշռող հրանոթներ։ Նրանց համար յերկաթուղային պլատֆորմների վրա պատրաստում են թնդանոթակալներ։ Յերկաթուղային պլատֆորմի թնդանոթակալներից կրակող թնդանոթներն ու հառարիցները կոչվում են յերկաթուղային ծանր հրետանի։



Նկար 6.

Այստեղ 6-րդ նկարում նկարված ե այդպիսի թնդանոթ։

Նրա կալիբրը 14 դյույմ է։ Նա կրակում ե 24¹/₂ կիլոմետր (30 վերստ)։ Հրանոթագնդակը կշռում ե 39 փութ։ Նույնիսկ այդքան մեծ հե-


ռավորության վրա նա շատ ուժեղ է խփում։
Հրանոթագնդակի ուժը շատ մեծ է, համաշխար-
հային սպանդի ժամանակ մի հրանոթագնդակ
պայթեց յերկաթուղու վագոնի մոտ ու վագոնը
շպրտեց ապրանքային պլատֆորմի կտուրը։ Նրա
քաշը պլատֆորմի թնդանոթակալի հետ միասին
17,500 վութ է։ Ուզեցին նույն տեսակի պլատ-
ֆորմ թնդանոթակալի վրա հաստատել հառւբիցը։
Ինչպես ասել ենք, նա խփում է վերևից, և յեր-
կրող, հառւբիցը հենց նույն թնդանոթակալից
կարող է կրակել ավելի ծանր հրանոթագնդակ-
ներ։ Հառւբիցի կալիբրը 16 դյույմ է։ Հրանոթա-
գնդակը կշռում է 58 տերեր ավելի։ Նա կրակում
է $27\frac{1}{2}$ կիլոմետր, այսինքն 25 վերստ։ Նրա
քաշը պլատֆորմ թնդանոթակալի հետ 13,750
վութ է։ Վերջապես կան այնպիսի ծանր թնդա-
նոթներ և հառւբիցներ, վոր նույնիսկ յերկաթու-
ղին չկ կարող փռխաղըել։ Այդպիսի թնդանոթ-
ները և հառւբիցները մաս-մաս են փռխաղըում
և հաստատում են հատուկ հիմքերի (բետոնյա
պլատֆորմի) վրա։

Վերջերս Ֆրանսիայում ծովափնյա կարեռը
քաղաքները պաշտպանելու համար շինել են նոր
թնդանոթներ, վորոնց կալիբրը 450 միլիմետր
և (18 դյույմ)։ Նրանք կարող են կրակել 60 կի-

լութեար (55 վերստ), Այդպիսի թնդանոթի հրանո-
թագնդակը կշռում է 1500 կիլոգրամ (95 վութ),
Նա մարդու հաստիկից բարձր է:

Ծ Ա Խ Խ.

Զեռնտու յե հանկարծակի հարձակվել թշնա-
մու վրա, մանավանդ գիշերը. մութը խանգա-
րում է տեսնել, թե ով և վոր տեղից ե հարձակ-
վում: Գիշերը փոքը
զորախմբերով հար-
ձակվելը լավ ե. այդ
ժամանակ մեծ ուժը
դժվար է զործում:
Առանձին զորա-
խմբերը հեշտու-
թյամբ են մոլորվում
և դժվարանում են
ճիշտ ուղղություն
պահպանել, այսինքն
դուրս գալ այնտեղ,
ուր հրամայված ե:
Պետք է կապ պահ-
պանել, այսինքն ի-
մանալ՝ ինչ ե կա-
տարվում հարեանների մոտ, ժամանակին ոգնել
հարեան զորախմբերին կամ նրանցից ոգնու-
թյուն ստանալ. Յեվ ահա հնարեցին թանձր,



Նկ. 7. Ֆրանս. նոր թնդանո-
թագնդակ՝ թի 95 վթանոց ոռմբը:
Մութը հարեանների մոտ, ժամանակին ոգնել
հարեան զորախմբերին կամ նրանցից ոգնու-
թյուն ստանալ. Յեվ ահա հնարեցին թանձր,

խիտ արհեստական ծխի ամպ: Այդ ամպը
 ծածկում ե հարձակվողի ուժերը, պաշտ-
 պանվողին. թույլ չի տալիս ճիշտ վորոշել, թե
 վհրաեղեւ և վհրքան ե հակառակորդը: Ծխի ամպը
 կամ, ինչպես ուրիշ կերպ անվանում են, ծխի
 քողը, հարձակվողին ձեռնտու պայմանների մեջ
 ե դնում: Նա պահպանում ե
 ցերեկվա բոլոր առավելու-
 թյունները, իսկ պաշտպան-
 վողը կարծես թե գործում
 ե գիշերը:

Ծուխն արձակելու շատ
 միջոցներ կան, բայց ամենից
 շատ ոգտվում են, այսպես
 ասած, ծխամոմերով: Այն
 վայրը, վորն ուզում են թշշ-
 նամուց ծածկել, դրանից
 միքիչ առաջ 2—3 կարգով
 դասավորում են ծխամոմերն
 ու վառում: Ծխամոմերը



Նկար 8.

պատրաստված են թիթեղի կամ կարտոնի բան-
 կայից: Բանկան լցնում են խառնուրդով,
 վորն այրվելիս թանձր, խիտ ծուխ ե տա-
 լիս: Կան զանազան խառնուրդներ, բայց նրանց
 մեծ մասին խառնված ե ֆուֆոր, վորովհետեւ նա
 այրվելիս տալիս ե շատ սպիտակ, խիտ ամպ:

Բանակի մեջ տեղափորում են դյուրավառ նյութեր՝ վառելու համար և ծածկում են կափարիչով:

Այստեղ 8. ըդ նկարը պատկերացնում ե անդիմական ծխամոմը:

Իհարկե մի մոմն իմաստ չունի, դրանով ծխի քող չի գոյանա: Բայց դրանցից շատ են գործածում: 500 մոմն արդեն լավ ծածկոց ե մի ամբողջ վաշտի համար:

ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԿԵՄ, ԻՆՉՊԵՍ ՈՒՐԻՇ
ԿԵՐՊ ԱՍՈՒՄ ԵՆ, ԳԱԶԵՐ.

Մինչև հիմա պատմեցինք, թե ինչպես են սպանում մարդկանց, բայց համաշխարհային պատերազմի ժամանակ, հատկապես վերջում, վոչ միայն սպանում եյին, այլ և թունավորում: Հեշտ չե այդ—պետք ե միանգամից մեծ թվով մարդկանց թունավորել, չմոտենալով նրանց, ում վոր թունավորում ես:

Ամենից հեշտ ու հասարակ կերպով այդ կարելի յե կատարել թունավոր գաղերով: Գազ ե կոչվում այնպիսի նյութը, վորը նման ե ողին կամ գոլորշուն (ողը նույնպես բաղկացած ե մի քանի գաղերի խառնուրդից): Առհասարակ գաղերը շատ թեթև են և լավ են խառնվում իրար: Մենք գաղը շնչում ենք, նշանակում ե, յեթե

ոդում թունավոր գազն ավելանա, ապանա արագ
կերպով կխառնվի ողին, և այն մարդիկ, վո-
րոնք կշնչեն այդ ողը—կթունավորվեն:

Պետք եր այնպիսի գազ գտնել, վորը հեշտ
լիներ մեծ քանակությամբ ստանալ և լիներ բա-
վականին թունավոր: Բացի այդ՝ չափազանց կա-
րենոր եր, վոր այդ թունավոր գազն ողից ավելի
ծանր լիներ, այլապես նա շուտով գետնից վեր
կը արձրանար և կդառնար միանգամայն ան-
մսաս: Անհրաժեշտ ե, վոր գազը փոփի հողի վրա:

Գերմանացիները գտան այդպիսի գազ, վորը
կոչվում ե քլոր: Քլորն ունի դեղնականաչավուն
գույն և անհաճո հոտ:

Գերմանացիներն ինչպես կարողացան մի-
անգամից մեծ թվով մարդկանց թունավորել գա-
զով: Նրանք մեծ քանակությամբ գազեր պատ-
րաստեցին և լցրին հատկապես դրանց համար
պատրաստված բալոնների մեջ:

Գազային բալոնը շատ ամուր սլողալատյա-
անոթ ե, պինդ ամրացրած կափարիչով: Կափա-
րիչն անզատճառ պետք ե պինդ ամրացնել, այ-
լապես գազը կհոսի և կթունավորի յուրային-
ներին:

Գազ ստանալու համար հիմնվում են գոր-
ծարաններ: Գազային բալոնները փոխադրում են
այն վայրը, վորտեղից ցանկանում են թունա-
վորել թշնամուն և ապա ձեռներով տանում են

առաջավոր գիծը՝ Գաղային բալոնները պիտի
շատ լինեն, քանի վոր թունավորելու գոտու լայ-
նությունը պիտի լինի մի քանի կիլոմետր (վերստ),
իսկ մի կիլոմետր (վերստ) լավ թունավորելու
համար պետք ե վոչ պակաս 700 գաղային բալոնից:



Նկ. 9. Գաղա-
յին բալոնը.

Հրացանները, գնդացիրները,
թնդա՛ռներն ու հառերիցները
շարունակ կրակում են դեպի առա-
ջավոր գիծը: Անհրաժեշտ ե այն-
պես անել, վոր գաղային բալ-
ոնները չջարդվեն և չթունավո-
րեն յուրայիններին: Դրա համար
խրամատների հատակում խոր, նեղ
խանդակներ են փորում և գա-
ղային բալոնները դնում են այն-
տեղ: Վերևից ծածկում են տախ-
տակներով, հող են ածում կամ
մեշոկներով հող են դնում: Նախ
քան գաղային բալոնը խանդակ-
ների մեջ դնելը կողքից նրա
զլխին ամրացնում են յերկար ու
բարակ ծորակով աղիք: Աղիքը
խրամատներից դեպի թշնամին
են դարձնում:

Յերբ այս մեծ աշխատանքը վերջացած ե,
ապա դեպի թշնամին փչող միալար քամու յեն

սպասում, վորպեսզի բանան ծորակնելն ու գաղ-
դը բաց թողնեն։ Քամին զազը կքշի դեպի թշշ-
նամին։ Ուժեղ քամին չափազանց շուտ կքշի
զազը, չի թողնի մի տեղ կանգ առնի և դրա հա-
մար ուժեղ չի թունավորի։

Այդ կերպով բաց թողած քլորը ցերեկով
լավ ե տեսնվում, վորովիետե նրանից գոյանում
ե միքանի սաժեն բարձրությամբ դեղնակա-
նաշավուն հսկայական ալիք։

Լավ յերեսում ե դանդաղ կերպով սահող այդ
ալիքը, Բայց միայն աչքին ե թվում, վոր նա դան-
դաղ ե սահում։ Նրանից վոչ միայն վոտքով, այլ
և ձիով չի կարելի փախչել։ Այդպիսի ալիքն
ընդգրկում ե 20 կիլոմետր (18 վերստ) տարա-
ծություն։ Պարզ ե, ինչքան ավելի հեռվից բաց
թողնվի զազը, այնքան ավելի քիչ թունավոր
կլինեն նրա ալիքները։ Յերբ գերմանացիներն
առաջին անգամ ֆրանսիացիների վրա բաց թո-
ղին քլորի ալիք, վերջիններից ցմահ թունավոր-
վեցին մոտ 5 հազար մարդ և հիվանդացան միքանի
անգամ ավելի։ Սովորաբար մեկը մյուսի յետեից
ու փոքրիկ ընդմիջումներով բաց են թողնում վոչ
թե մեկ, այլ միքանի զազային ալիք։ այդպիսով
կարելի յե ավելի հաջող թունավորել մարդկանց։

Գազի արձակման այդ միջոցը յերկու անուն
ունի՝ «զազաբալոնային զըռհ» կամ «զըռհ զա-
զային ալիքներով»։

Ամենից պարզ ու հարմարն ե հրետանու
հրանոթագնդակները լցնել թունավոր նյութե-
րով և կրակել հրանոթներով։ Այդ միջոցով կռվի
ուղած վայրում կարելի յե գազային ամպ գո-
յացնել։ Թեկուզ քամին վոր կողմն ել փչի, կա-
րելի յե կրակել, միայն թե չափազանց ուժեղ
չինի և չցրի գազային ամպը։

Հրանոթագնդակները կարելի յե լցնել վոչ
միայն թունավոր գազով, այլ և հեղուկ ունույն-
իսկ պինդ թույներով։

Դժվար չե հասկանալ, թե ինչու այդ այդ-
պես ե։ Հրանոթագնդակը պայթում ե, վորովհետև
բռնկվում ե նրա միջի վառողը։ Պայթյունից
առաջանում ե ուժեղ տաքություն։ Տաքությունը
գազի (գոլորշու) յե վերածում նույնիսկ պինդ
ու հեղուկ թույների մեծ մասը։ Իսկ այն թույ-
ները, վորոնք գազի չեն վերածվում, պայթյունի
ուժից փոշի յեն դառնում։ Այդ փոշին տարած-
վելով ողում ընկնում ե թոքերի մեջ։

Ամենասարսափելի թունավոր նյութը մա-
նանեխային գազն ե կամ իպրիտը, վորը դժվար
ե գոլորշիանում և չի փոշիանում, բայց դրա
մասին կխոսվի առանձին։

Ներկայումս գտել են զանազան թունավոր
նյութեր, բայց, ինարկե, սրանով չեն հանգստա-
ցել ու դեռևս շարունակում են նորերը փնտուել։

Բոլոր թունավոր նյութերը միատեսակ չեն թունավորում, և հենց դրանով տարբերում են.

1. Մահացու, այսինքն այն թույները, վորոնք թունավորում են մահացու կերպով։ Նրանք խեղդում են մարդուն, թունավորելով արյունը։

2. Այրող, այսինքն այնպիսիները, վորոնց փոքրիկ մասնիկներն ել բավական են սկզբում առաջացնելու պալար, իսկ հետո շատ հիվանդագին, դժվար բուժելի վերք։

3. Շնչառություն խիստ դժվարացնող։ Այդ գազերն այնքան են խանգարում շնչառությունը, վոր չնայած մարդը նրանցից չի մեռնում, բայց ծանր հիվանդանում եւ և անընդունակ ե դառնում շարունակելու կոիվը։

4. Ժամանակավորապես կովելու անընդունակ դարձնող գազեր, որինակի համար՝ ուժեղ սրտախառնություն ու սրտաթափություն, անընդհատ ուժեղ փռշտոց կամ այնպիսի առատ արտասուք առաջացնող, վոր մարդը բառացիորեն դադարում ե տեսնելուց։ Շատ գազերի թունավորումից առաջանում են միքանի հետևանքներ, այսպես, որինակ՝ «մանանեխային» գազից մարդ շնչասպառ ե լինում, նրա մարմնի վրա յերևան են գալիս սարսափելի այրվածքներ, և միաժամանակ նա կուրանում եւ իզուր չե, վոր արտասահմանում նրան անվանեցին «գազերի թագավոր»։

Բացի այդ, թունավոր նյութերն ըստ իրենց
գործողության տևողության բաժանվում են՝

1. Անկայուն, այսինքն այնպիսիները, վորոնք
շուտ և հեշտ գազ են դառնում (գոլորշի), ազ-
դում են համարյա միանգամից, բայց վոչ յեր-
կար ժամանակով։ Նրանք լավ են գաղաբալոնային
գըռոհի համար։

2. Կիսակայուն. դանդաղ են գործում, բայց
դրա փոխարեն ավելի յերկար ժամանակով։

3. Կայուն. սրանք չեն թունավորում միան-
գամից (յերբեմն 6-8 ժամից հետո), բայց դրա
փոխարեն շատ յերկար են ազդում մի շարք պայ-
մաններում, վորոնք դանդաղեցնում են նրանց
գործողությունը (խոնավ, ցուրտ յեղանակ),
նրանք թունավորում են միքանի շաբաթվա ըն-
թացքում։

Կիսակայուն ու կայուն թունավոր նյութերը
հրետանային հրանոթներով են կրակում, վորովհե-
տեւ դրանցով թունավորելու համար չի պահանջվում
խիտ ամպի գոյացում։ Իհարկե, հրետանային հրա-
նոթներով (թնդանոթներն ու հառլիցները) կա-
րելի յե կրակել նաև անկայուն գազերը։ Բայց
առագ կերպով խիտ, թունավոր ամպ գոյացնե-
լու համար պահանջվում է միքանի հրանոթնե-
րից ուժեղ կրակ բաց անել։ Քանի վոր այդ
գազերն առագ կերպով ցնդում են, դրա համար

անհրաժեշտ ե շարունակ կրակել, վորպեսզի ամպը
չնոսրանա ու չանհետանա.

Այժմ միքանի խոսք «մանանեխային գաղի»
կամ, ինչպես ուրիշ կերպ կոչում են, «իպրիտի»
մասին։ Դա «իպրիտ» ե կոչվել իպր քաղաքի
անունով, ուր առաջին անգամ գործադրվեց
կոփվերի ժամանակ։

Դա ամենակայուն և ամենավտանգավոր
թունավոր նյութերիցն ե։ Այդ գաղն ազդում ե
մարդու շնչառության վրա, առաջացնում ե սոս-
կալի այրվածքներ, վորոնք շուտով վերք են դառ-
նում ու կուրացնում։

Գաղերի մեծամասնությունը վոանգավոր
ե միայն այն ժամանակ, յերբ նրանցից գո-
յանում ե խիտ ամպ։ մանանեխային գաղը
վտանգավոր ե նույնիսկ փոքր քանակությամբ։
Թունավորված մարդը մեկեն չի զգում իր
թունավորումը, բայց թունավորվելուց 6.8
ժամ հետո նա հանկարծ հիվանդանում է,
իսկ յեթե ուժեղ ե թունավորումը, ապա և
մեռնում է։

Յերբ վոր պայթում ե մանանեխային գա-
ղով լեցված հրանոթագնդակը, նրա վոքրիկ մաս-
նիկները ցըվում են մեծ տարածության վրա։
Յեթե այդպիսի հրանոթագնդակներով յերկար
ժամանակ միևնույն տեղում կրակեն, ապա որե-

բով, կամ նույնիսկ միքանի շաբաթով, կարելի յե
թունավորել հողը:

Այդ թունավորումն այնքան ուժեղ ե, վոր
ձիու սմբակներին անհրաժեշտ ե հազցնել յուղած
բրեղենտից հատուկ վոտնամաններ:

Տների ու հողի թունավորումը կարող ե
միանգամից չերևալ: Խոնավ ցուրտ յեղանակին
վոչինչ չի նկատվում, բայց յերբ արևն սկսում
ե տաքացնել, այդ վայրով չի կարելի անցնել.
Դա հանկարծ ուժեղ կերպով թունավորված ե:


Այժմ բոլորն աշխատում են, վորպեսզի
հրանոթագնդակը պայթելիս մանանեխային դազը
վերածվի մանրիկ փոշու: Այդ փոշին տարածվե-
լով ողում, կընկնի թոքերի մեջ, և, իհարկե, մա-
նանեխային դազն ավելի վտանգավոր կդառ-
նա:

Թե ինչքան ուժեղ կերպով թունավոր ե
մանանեխային դազն ու ինչքան յերկար ե գոր-
ծում նրա թույնը, դա պարզ կերպով ցույց ե
տալիս հետեւյալ դեպքը:

Գերմանացիները պետք ե գրոհ տային
ֆրանսիացիների կողմից գրաված Արմանտյեր
քաղաքի վրա: Նրանք վորոշեցին մանանեխային
դազով ֆրանսիացիներին վանդել քաղաքից: Հրա-
ձգությունն այնքան ուժեղ եր, վոր մանան-
եխային դազն առուներով Արմանտյեր քաղաքի
փողոցներով հոսում եր, ինչպես ջուրն ուժեղ

տարափից հետո։ Վոչ մի հնարավորություն չկար
մալ քաղաքում։ Բայց դրանից հետո, յերբ
ֆրանսիացիները թողին քաղաքը, գերմանացի-
ները յերկու շաբաթ

չկարողացան այն-
տեղ մտնել, այնքան
ուժեղ թունավորվել
ելին սալահատակ-
ները, մայթերը և
տների պատերը։
Նույնիսկ յերկու
շաբաթ անց գեր-
մանացիները քա-
ղաք մտնելիս նախա-
զգուշական միջոց-
ների դիմեցին չթու-
նավորվելու համար։
Համաշխարհային
սպանդի վերջում
ամերիկացիները
գտան թունավորող
նոր նյութեր և ան-
վանեցին «լյուն-
դիտ»։ Նա ավելի
թույլ ե այրում,



Նկար 10.

քան մանանեխային գաղը, բայց շատ ավելի
թունավոր ե շնչառության և արյան համար։
Նրա ներգործությունն անպայման մահացու յեւ

ԳՈԶԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼԸ.

Այնուամենայնիվ զաղերի թունավորումից
կարելի յե ազատվել:

Գլխավոր պաշտպանության միջոցը հա-
կագաղն եւ Բոլոր հակագաղերն իրենց կազմու-
թյամբ շատ նման են իրար։ Մեզ մոտ ընդուն-
ված հակագաղը բավականին հասարակ ե, բայց
լավ ե պաշտպանում։ Դա կողքերից տափակացրած
թիթեղյա մեծ բանկա յե, վոր բաժանված ե յերկու
կեսի։ Վերևում ուեղինե դիմակն ե։ Այդ դիմակը
դնում են գլխին, վորն ամուր սեղմում ե զլուխը։
Աչքերի տեղը զետեղված են ապակիներ։ Ներքեի
կիսում զետեղված ե խառնուրդը։ այդ խառնուրդի
գլխավոր մասն ածուխի հատիկներն են։ Հակա-
գաղը վերևից ծածկվում ե կափարիչով, իսկ ներ-
քեից փակվում ե խցանով։ Խցանը չկորչելու
համար կապված ե պարանով։ Բանկայի վրա կան
ականջիկներ, վորոնց մեջ հազցրած են կապեր։
Հակագաղը կապերի միջոցով ուսին են ձգում։

ՄԵՐ ՀՅԱԿԱԳԱԶԸ.

Այն գլխին դնելու համար պետք ե հանել
գլխարկը, հանել խցանը և դիմակը բարել զըւ-
խին։ Կափարիչը ձգում են մեջքին։

Այստեղ նկարված ե հակագաղ կրող կար-
միր բանակայինը։ Դիմակի վերևի մասը, վոր

սեղմ զըկում ե զլուխը, գլխարկի տակից չի յերկում։ Տեսնվում ե դեմքը ծածկող դիմակի մասը, հակագաղի ներքեի մասը խառնուրդի հետ և խցանը պարանի հետ։

Հակագաղը կը ելիս շնչում են խառնուրդի միջից։ Խառնուրդը պահում ե բոլոր թունավոր գաղերը, իսկ թոքերն անցնում ե մաքուր ողը։ Հակագաղին պետք ե ընտելանալ, հակառակ դեպքում յերկար ժամանակ կամ ուժեղ աշխատանքի ընթացքում նրա մեջ շնչել դժվար ե։ Դրա համար, բացի հակագաղերից, շինում են նաև գաղային ապաստարաններ։ Դրանք գետնում խոր փորված փոսեր են։ Վերելից դըված են միքանի շարք հաստ գերաններ, վորոնք ծածկված են մոտ մի սաժեն հողով։ Հետեւում են, վորպեսզի անցքեր չմնան, վորոնց միջով կարող ե ող անցնել։ Փոսի մուտքը շինված ե յերկար միջանցքից։ Առհասարակ միջանցքում կան յերկու փեղկեր։ Յուրաքանչյուր փեղկի վրա կախված ե յերկուական կտավ (վարագույր), կտավները թրջած են



Նկար 11.

Հակագաղ.

հատուկ խառնուրդով, վորն ածուխի նման պահում ե թունավոր գաղերը:

Այդ ապաստարաններում գաղային գրոհի ժամանակ առանց դիմակի կարելի յեն նստել և հանգըստանալ:

Հասկանալի յե, վոր պատերազմի ժամանակ միշտ պետք ե հետևել. թե արդյոք չի սկսվում գաղային գրոհը, և արդյոք պետք չե ծածկել գաղային դիմակները. Դրա համար առանձին հեթապահներ են նշանակում:

Ավելի դժվար ե պաշտպանվել այրող գաղերից: Փորձեցին հագնել խիստ յուղոտած, բըեղենտի հատուկ հագուստ: Բայց դա շատ ծանր եր և դրա մեջ անհարմար ե պատերազմել: Գտան այրվելուց պաշտպանող մազ ու դրանով քսում եյին ամբողջ մարմինը: Բայց դա այնքան ել հուսալի չե—ամեն մի մազ, հատկապես աշխատանքի ժամանակ, հեշտությամբ սրբվում ե, նշանակում ե այն տեղում, ուր մազը սրբվել ե, կարող ե հեշտությամբ այրվածք առաջանալ:

ՈԴԱԿԱՎԵՐ


Ներկայումս մարդ չկա, վոր լսած չլինի ոդանավերի մասին:

Պատերազմում ոդանավերը շատ ոգտակար են: Դրանք թռչում են բարձր և տեսնում են հեռուն: Այն, ինչ վոր գետնից չի տեսնվում, ոդա-

Նավը հեշտությամբ ե հայտնաբերում: Դրա համար ճանապարհ պետք չե, նա միշտ կարող ե թռչել թշնամու վրայով: Դիտել, թե ինչ ե կատարվում այնտեղ և լուսանկարել:

Դուք արդեն կարդացիք, թե ինչպես այժմ հեռու յե կրակում հրետանին: Դրա համար ողանավերն ստիպված են բարձրից թռչել: Բայց կան այնպիսի հրանոթներ, վորոնք կարող են 8 վերտից բարձր թռչող ողանավերի վրա կրակել:

Ողանավերը վոչ միայն դիտում են, այլև կռվում: Նրանք զինված են գնդացիրներով: Վեր-



Նկար 12.

Ճերս փորձեր յեղան նրանց վրա փոքրիկ թնդանոթներ դնել, բայց ողանավի գլխավոր զենքը ոռոմքն ե, վոր նա գցում ե գետին:

Շատ յերկրներ ունեն ողային նավատորմիդ, որինակ՝ այժմ Ֆրանսիան ունի 2000-ից ավելի ուղղմական ողանավեր, իսկ շուտով կունենա 2,500:

Յուրաքանչյուր մարտական աշխատանքի
համար պահանջվում ե ողանավերի առանձին
կառուցվածք:

Կան հետախուզող, դիտող ու լուսանկարող
ողանավեր: Բոլոր այդ մեքենաները (ողանավը
նույնպես մեքենա յե) պետք ե սրբնթաց լինեն
և կարողանան շատ բարձր թոչել: Դրանց դեմ
ուղարկում են գնդացիրներով ողանավեր, վորպես-
զի քշեն նրանց ու խանգարեն դիտել: Այդպիսի
ողանավեր կոչվում են կործանիչ ողանավեր:
Նրանք ավելի արագընթաց են, կարճ ժամանա-
կամիջոցում բարձրանում են վերև և շատ
ճկուն են:

Այն ողանավերը, վորոնք ոռւմք են զցում,
կոչվում են ոմբակիր:

Բացի այդ ողանավերը կցում են այրող և
սպանող նետեր. այրող, թունավոր (թունավոր
նյութերով լցված) և ծխի ոռւմբեր:


Անսպասելիորեն իջնելով և կրակ բաց անե-
լով զինվորների վրա՝ դրանք կարող են առաջ
բերել մեծ խուճապ:

Տսվիաստանից անցնում եր Բուդյոննու պան-
ծալի հեծելազորը: Ինչպես միշտ, զորքը քայլե-
լու ժամանակ կազմել եր յերկար աղիք (սյուն):
Հանկարծ յերկացին սպիտակների մոտ 10 ուժ-
ինավերը. դրանք մեկ-մեկ եյին թոշում, իրար
ետեից: Աշադ ցածացան հեծելազորի վրա և

սկսեցին գնդացիքներից կը ակել սյունի ուղարկությամբ. Բայց
 տափաստան ե, վոչ
 մի աեղ չի կարելի
 ծածկվել: Հեծելա-
 զորն ստիպված
 ցըվեց, վորպեսզի
 ավելի քիչ մարդ
 ընկնի կը ակի տակ:
 Համաշխարհային
 վերջին պատերազմի
 ժամանակ ոռումբերն
 առանձնապես ծանր
 չեյին. դրանցից ա-
 մենածանրերը կը շ-
 ռում եյին 30 փթից
 վոչ ավել:

Ողանավի ոռումբն
 ըստ եյության
 մինույն ականն
 ե, բարակ պատե-
 րով, այդ պատճառով
 դրա մեջ շատ ե վա-
 ռող տեղավորվում:

Ներկայումս նկ. 13. Ողանավի 125 փթ.
 ումբակիքները կը ումբ ոռումբ. բարձր. 4 մ. (5 ա. 10 վեր.)
 են 15, 27 կամ 50 փթանոց միքանի ոռումբ:



Վերջերս շինված է 125 փթանոց ողաճավային
ռումբ:

Թե ինչքան ե դրա մեծությունը, կարելի
յե տեսնել № 13 նկարի վրա:

Այդ ռումբն ընկնելով գետին, պայթում է.
բացվելով հողում, առաջացնում է 6 մետր (մոտ
3 սաժեն) խորությամբ և 20 մետր (մոտ 10
սաժեն) տրամագծով փոս:

Այսպիսի մի ռումբ բավական է, վորպեսզի
ամենամեծ, ամուր ռազմանավը վերածի տձե,
անճոռնի յերկաթի կտորների մի կույտի: Վեր-
ջին տեղեկությունները հաղորդում են, վոր Ամե-
րիկայում պատրաստված ե 250 փթանոց ռումբ:
Այդ ռումբը $1\frac{1}{2}$ արշինից (1 մետր) ավելի յեր-
կար և 1 արշին ($\frac{3}{4}$ մետր) ավելի հաստ ե այս
գրքույկում նկարված ռումբից: Դրա մեջ ածում
են ավելի քան 120 փութ վառող: Յեթե ողա-
ճավը բարձր չի թոշում, ապա դրա ռումբերը
բավականին նշանառու յեն: Բայց վորքան բար-
ձը ե թոշում, այնքան դժվար ե խփում: Վեր-
ջերս մտածում են, թե արդյոք հնարավոր չե
այնպիսի մեծ ողաճավեր շինել, վորոնցով կարե-
լի լինի զորք փոխադրել:

Այն ժամանակ իսկապես կարելի կլինի
հարձակվել անսպասելի արագությամբ:

Արդեն վորոշ հաջողություններ կան: Իրա-
քում բնակիչները յերբեք չեյին ուզում հպա-

տակվել անգլիացիներին, գրգռվեցին և զենքի դիմեցին։ Այնպիսի տեղեր կան, վորտեղ անկարելի յե անցնել։ Ապստամբները հավատացած եյին, վոր անգլիացիները վոչ մի կերպ չեն կարող անցնել այդ տեղերը։ Բայց անգլիացիներն ողանավերով ամբողջ մի վաշտ զորք փոխադրեցին, գրավեցին անմատչելի տեղերը և խստորեն վարվեցին ապստամբների հետ։

ՊԱՏԵՐԱՁՄԸ ՇՈՎԻ ՎՐԱ.

Մինչև հիմա խոսվեց ցամաքային և ողանավային պատերազմի մասին. մնում ե ծովային պատերազմը։

Ծովային պատերամն ամենաթանգն ե, վորովհետև միայն մի մեծ մարտանավ արժե վոչ պակաս 70 միլիոն ռուբլի վոսկով։ Ուազմական նավատորմիղը, ինչպես նաև յուրաքանչյուր բանակ, բաղկացած ե զանազան հանձնարարություններ կատարող զորախմբերից։

Նավատորմիղի գլխավոր ռւժը, հսկայական պողպատյա շերտերից հաստ (յինչև 16 դյույմ) զրահներով պատած մարտանավերն են։ Վերջերս պատրաստած այդպիսի մի մարտանավ կշռում ե մոտ $5\frac{1}{2}$ միլիոն փութ։

Իր նման հսկայական մարտանավերի դեմ կռվելու և ափերը ոմբակոծելու համար նա զին-

ված ե 12 թնդանոթով։ Այդ թնդանոթները շատ
մեծ են (մինչև 18 դյույմ կալիբրով) և յերկար։
կրակում են տասնյակ վերստ։ Նրանք յերեք-յե-
րեք տեղավորված են պողպատյա աշտարակների
մեջ։ Յերկու աշտարակը գտնվում են նավի առ-
ջեկի, իսկ յերկուսը յետեկի մասում։ Ծայրերում
գտնվող աշտարակներն ավելի ցածր են մեջտե-
ղիններից։ Յետեկի աշտարակներից կրակում են առ-
ջեկի աշտարակների վրայով։ Աշտարակները
պտտվում են, և թնդանոթները կրակում են զա-
նազան ուղղությամբ։ Զնայած իրենց ծանրու-
թյանը, այդ հրաշք-զրահանավերը շատ արագ են
գնում։ Մի ժամում կարող են անցնել 37 վերստ։

Անսպասելիորեն չշրջապատվելու, թշնամու
նավատորմիղը հետախուզելու և իրենց մարտա-
նավերի մարտական դասավորվածքը ծածկելու
համար բոլոր պետություններն ունեն հածա-
նավեր։

Նրանք միայն կարող են հանկարծակիորեն
հարձակվել խոշոր մարտանավերի վրա։ Նրանց
թնդանոթներն անզոր են կանոնավոր հարձակ-
ման համար, դրա փոխարեն նրանք ուժեղ
զենքեր—ականներ ունեն։ Ականն ողանավերի
ամենախոշոր ռումբից ավելի մեծ ե ու ծանր։
Ականները հածանավերի ջրում ընկղմած մասում
դրված հատուկ գործիքների միջոցով են կրակում։

Յերկու-յերեք այդպիսի ա'լաններ կարող են խոր-
տակել ցանկացած մարտանավը:

Կան ականներով զինված հատուկ նավեր,
վորոնք կոչվում են ականա'լիրներ, նրանք փոքր
են, բայց արագընթաց, թնդանոթները քիչ են,
բայց յուրաքանչյուր թնդանոթն ունի 6 ականի
ապահովատ:

Մեծ մասամբ գիշերային անսպասելի գրոհը
մեծ նավերին կարող ե ծանր կորուստներ
պատճառել:

Ռուս-յապոնական պատերազմն այդպիսի
հարձակմամբ սկսվեց: Գրեթե մեր բոլոր մեծ
նավերը խիստ վնասվածքներ ստացան. Նավերը
յերկար ժամանակ նորոգվելու պատճառով չը-
կարողացան ծովը դուրս գալ: Ականակիրների
արագ ընթացքը վնասակար ե առևտրական նա-
վերի համար: Մարտանավերի և առևտրական
նավերի համար ավելի վտանգավոր են ջրասույզ
նավերը: Նրանք լողում են թե ջրի տակ և թե
յերեսին, նույնիսկ կարող են միքանի որով մնալ
ծովի հատակում:

Նրանք զինված են ականներով և մի փոքր
թնդանոթով: Ակզրում իսկապես փոքրիկ նավակ-
ներ եյին: Հետո շինեցին ավելի մեծերը: Այժմ
Յապոնիայում 550 հազար փթանոց ջրասույզ
նավ են շինում, վորը մեծությամբ պիտի

հավասար լինի միջակ թեթև հածանավին և ա-
մենամեծ ականակիրից յերկու անգամ մեծ:

Նավատորմիղն ունի ոժանդակ շատ նավեր:
Դրանք մենք չենք թվի-դա շատ տեղ կիլի
մեզնից:

Հեռավոր տեղերում հետախուզումներ կա-
տարելու համար նավատորմիղն ունի ողանավեր:
Դրանք թռչում են ողում և ջրի վրա յեն իջնում,
դրա համար կոչվում են՝ հիդրոպլաններ, այ-
սինքն ջրային ողանավեր:

Նավատորմիղն ավելի թանգ և նստում,
քան թե ցամաքային զորքը:

Անգլիային և Յապոնիային, վորոնք շրջա-
պատված են ծովով, նավատորմիղը շատ ավելի
անհրաժեշտ է, քան թե մյուս յերկրներին,
ինչպիսին ե մերը, վորի ջրային սահմանները
մեծ չեն:

Դրա համար Անգլիայի, Հյուսիսային Ամե-
րիկայի և Յապոնիայի նավատորմիղն ամենա-
ուժեղն ե աշխարհում:

Նրանց, ինչպես և մյուս նավատորմիղի
նպատակն ե թշնամուն չթողնել իրենց ափերին
մոտենալ:

Յեթե նկատի չունենանք ծովային պատե-
րազմը, յերբ այդպիսի հրեշներն իրենց հսկա-
յական թնդանոթների կրակով աշխատում են

վոչնչացնել իրաը, ասլա ծովային նավատորմիղը
կարող ե միայն ծովափնյա քաղաքների և գյու-
ղերի վրա հարձակվել և խորտակել առետրական
նավերը:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.

Այժմ պարզ ե, վոր յեթե վորևե մեկն ասի՝
«մեզ բանակ պետք չե», նա կամ վոչինչ չի հաս-
կանում կամ վատ և վտանգավոր նպատակներ
ե սնուցանում»:

Մեր բանակը մեծ չե, բայց մեր բանվորա-
գյուղացիական իշխանությունը պետք ե հոգ
տանի նրան զինելու և ապահովելու համար:

Ամեն ըոպե կարող են հարձակվել մեզ վրա,
իսկ մենք պետք ե յետ մղենք նրանց։ Հարց ե
ծագում, արդյոք բավականին փոքր չե՞մեր բա-
նակը։ Մենք չպետք ե վախենանք դրանցից։
Մեր իշխանությունը և Հոկտեմբերյան հեղա-
փոխության նվաճումները պաշտպանելու համար
ամեն մի բանվոր և գիտակից գյուղացի վոտքի
կկանգնի։

Մենք ստեղծեցինք յերկրային զորամասեր։
Յերկրային զորամասերում կանչված ամեն մի
գիտակից քաղաքացու պարտքն ե իր բոլոր ու-
ժերը գործադրել արագ կերպով զինավարժու-
թյուն անցնելու համար։ Այս ժամանակ մեր

յերկրացին զորամասերը Կործիք բանակի նման
լավ կկռվեն.

Մենք չենք կարող ու չենք համարձակվի
բուրժուական պետությունների նման սպառա-
գինման վրա ժողովրդական մեծ գումարներ
միսել: Մինչդեռ իրականության մեջ բուրժու-
ական յերկրները վոչ թե իրենց, այլ բանվորնե-
րի ու գյուղացիների աշխատած կոպեկներն են
միսում, իսկ իրենք շատ չնշին ծախսեր են ա-
նում. մենք բանակի վրա միսում ենք մեր աշ-
խատած կոպեկները: Դրա համար մեր բանակը
վատ ե սպառագինված:

Բայց մեր բանակն ուժեղ ե իր վոգով: Նա
վոտից ցգլուխ աշխատավորներից ե կազմված.
բուրժուաների մոտ կառավարում են, հրաման
են արձակում և դեպի մահ են ուղարկում բուր-
ժուաները, իսկ մեռնում են բանվորներն ու
գյուղացիները:

Հարկ յեղած դեպքում մենք կպատերազ-
մենք մեր գոյության և աշխատավորության իշ-
խանության համար: Մեծ նպատակի գիտա-
կցությունը և մեր գործի խոր ճշմարտությունը
հզոր կամք կներշնչեն հաղթանակի համար:

Կհաղթի նա, ով հաստատակամ վորոշել ե
հաղթել: Մեքենան միայն ոգնում ե մարդուն.
մարդն ե պատերազմում ու հաղթում,

Համենայն գեղս ցավալի յե, վոր ժողովը՝
դական փողերն իզուր տեղը մխավում են, ոգուտ
չտալով խաղաղ շինարարության:

Բարեբախտաբար այդ այդպես չե. պատե-
րազմի համար անհրաժեշտ վորոշ բաներ կարող
են ոգտակար լինել նաև խաղաղ շինարարու-
թյան համար. Արագընթաց ողանավերը կփո-
խադրեն փոստը, մեծ ծանրություն վերցնող
ոմբակիրները ճանապարհորդներ և արժեքավոր
իրեր:

Թըթուրավոր տրակտորները կարելի յե լծել
գութանին, իսկ անիվավորներով տեղափոխել
մթերքներ ու ապրանքներ:

Թունավոր նյութեր (թունավոր գաղեր)
հնարող գիտությունը կոչվում ե քիմիա, իսկ
արդյունահանող և վերամշակող արդյունաբե-
րությունը կոչվում ե «քիմիական արդյունաբե-
րություն»:

Միայն քիմիական արդյունաբերությամբ
զարգացած յերկրները կարող են բավականա-
չափ թունավոր նյութեր պատրաստել: Բայց
քիմիական արդյունաբերությունը նրա համար չե
միայն, վոր թունավոր նյութեր պատրաստի, նա
զբաղված ե նույնպես զանազան գեղեր պատրաս-
տելով: Նա գտել ե ամեն տեսակ դիմացկուն ներ-
կեր: Քիմիական արդյունաբերությունն արտա-
դրում ե արհեստական պարարտացման միջոցներ:

Մարդկանց թունավորող գաղերով կ սրելի
յե վոչնչացնել մորեխներին, դաշտամկներին և ու-
րիշ վնասակար կենդանիներին։ Այդ արդեն փոր-
ձել են և շատ հաջող արդյունք ե տվել։

Գազաբալոնային գրոհը, գազային հրանո-
թագնդակներ կրակելը, առանձնապես ողանա-
վերի գազային ռումբերը վոչ միայն բանակին
են սոսկալի կորուստներ պատճառում, այլ և
ամբողջ ազգաբնակությանը։ Ռազմա-քիմիական
մեր յերիտասարդ արդյունաբերությունը նույն-
պիսի աջակցության կարիք ունի, ինչպես մեր
ողանավատորմիղը։ Ազգաբնակությունը պետք
ե իմանա թունավոր գաղերի հարձակումից
թագնվելու միջոցները։ Մեզանում հիմնվել ե
ռազմա-քիմիական գործը կամավոր ուսումնա-
սիրողների և նրա զարգացման աջակցողների
ընկերություն՝ «Ավիոքիմ»։ Ամեն մի բանվոր ու
գյուղացի և բոլոր նրանք, ում համար թանգ ե
աշխատավորների իշխանությունը, պետք ե ան-
դամագրվեն այդ ընկերությանը։

Հրետանային կրակով կարելի յե և փորձել են
կռվել յերաշտի դեմ։

Այդ կրակի միջոցով յերկնքի վրա ամպեր
են հավաքում, և այդպիսով անձրև ե գալիս։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միությունը (ԽՍՀՄ) ուշադրությամբ

հետեւմ ե ոսպմական վերջին հայտնագործում-
ներին. Նա մեծ աշխատանք ու յեռանդ ե թա-
փում, վորպեսզի պատերազմին անհրաժեշտ բա-
ներն, ոգտակար լինեն նաև խաղաղ կյանքում:
Նա սպասում ե այն ժամանակին, յերբ սպառա-
զինմտն միջոցները կարելի կլինի վերափոխել և
հարմարեցնել խաղաղ կյանքին:

Այն, ինչ անպետք կհամարվի, դեն կշպրտվի
ինչպես անպետք և մասսակար լաթ, ինչպես
հին, արդեն ապրած, սնարդար կյանքի ցայ-
տուն վկա:

Այժմ մենք շրջապատված ենք այնպիսի
յերկրներով, ուր իշխանությունը գտնվում է
կապիտալիստների ձեռքին: Մենք ստիպված ենք
մեր բանակի, նրա սպառազինման և սպանու-
թյան ու թունավորման կատարելագործված մի-
ջոցների դեմ պաշտպանվելու համար միջոցներ
հնարելու վրա ծախսեր անել:

Յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի կար-
դալով այս գրքույկը կհամոզվի, թե ինչքան
վտանգավոր ե անտարբեր վերաբերմունք ունե-
նալ դեպի մեր Միության պաշտպանությունը
կապիտալիստներն որեցոր, անդադար ուժեղա-
ցնում են իրենց բանակները և սպառազինումը:
Բուրժուազիան ցանկացած ըոպեյին կարող ե
հարձակվել մեզ վրա. մենք պետք ե միշտ պատ-
րաստ լիննք:

Մյուս յերկրների ողոլետարական հեղափոխությունը միայն վերջնականապես կապահովի Խորհրդային Հանրապետությունների Միությունը:

Մյուս յերկրների բանվորներն ու աշխատավոր գյուղացիները դրա համար հավաքում են իրենց ուժերը։ Մինչ այդ, չնայած մեր աղքատության, ստիպված ենք մեր զորքն ու նավատորմիկը մարտական վիճակում պահելու համար գումարներ ծախսել։ Մեր բանակի ու նավատորմիդի ապահովությունից, մեր Հանրապետությունների յուրաքանչյուր ազնիվ քաղաքացուն առաջին հերթին բանվորի ու գյուղացու զինվորական ուժերին ցույց տված աջակցությունիցն ե կախված մեր գոյությունը ե մեր կյանքի հանգստությունը։

Բանվո՞ր ու գյուղացի՝ նիշիր, պատմի՞ր վորդուդ ու յեղբորդ, վոր պատերազմի դատում հանուն համաշխարհային բուրժուազիայի վասակի 37 միլիոն ռուս, Քրանչիացի, գերմանացի, ննդիկ, ավստրիացի յեւ ուրիշ բանվորներ ու գյուղացիներ զնիվեցին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱՋՄԱՆ ԶՈՒՏԵՐԸ


ՀԱՅԱՍՏԱՆԸ պատերազմում վոչնչացել են.

Թուսաստանում	13,000,000	մարդ
Գերմանիայում	6,200,000	"
Ավստրո-Հունգարիայում	5,800,000	"
Ֆրանսիայում	3,500,000	"
Իտալիայում	2,150,000	"
Բրյուրբիայում	1,921,000	"
Անգլիայում	1,700,000	"
Սերբիա և Զերնոգորիայում	.				840,000	"
Ռումինիայում	450,000	"
Ամերիկ. Միաց. Նահանգներում	.				400,000	"
Բելգիայում	360,000	"
Բոլգարիայում	300,000	"
<hr/>						
ՀԱՅԱՍՏԱՆԸ					36,471,000	մարդ

**Համարյա 37 միլիոն մարդկային կյանք զոհ դարձան
համաշխարհային կապիտալին:**


**Վ.ո՞րքան ժողովրդական փող նստեց պատերազմն ամ-
բողջ աշխարհում:**

Թուսաստան	մոտ	75	միլիարդ	վոսկի
Գերմանիա	"	65	"	"
Ֆրանսիա	"	50	"	"
Ավստրո-Հունգարիա	"	40	"	"
Ամերիկա	"	35	"	"
Մնացած պատերազմող յէրկը.	"					60	"	"
<hr/>								
ՀԱՅԱՍՏԱՆԸ						325	միլիարդ	վոսկի






ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001629



054.



ԳԻՆԸ 25 ԿՈՊ.